ՀՏԴ: 929:791.43(479.25)Փարաջանով
DOI: 10.54503/978-5-8080-1555-5-374

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն,
Երաժշտության բաժնի վարիչ (Հայաստան, Երևան)
annaasatryan2013@gmail.com

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՓԱՐԱՋԱՆՈՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Սերգեյ Փարաջանովի ստեղծագործության ուսումնասիրությունը մշտապես գտնվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կինոգիտական հետաքրքրությունների առանցքում: Հայաստանում փարաջանովագիտության ձևավորման ու զարգացման ակունքներում կանգնած ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը նախաձեռնել է Երևանում Սերգեյ Փարաջանովի թանգարանի հիմնադրման գործն ու ակտիվորեն մասնակցել այդ ուղղությամբ տարվող աշխատանքներին:

Տասնամյակներ շարունակ՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը եղել է ու է Հայաստանում փարաջանովագիտության կենտրոնը: Դրա լավագույն վկայություններից մեկն էլ 2024 թվականի սեպտեմբերի 10-12-ը Երևանում կազմակերպված «Սերգեյ Փարաջանով – 100» աննախադեպ միջազգային գիտական կոնֆերանսն էր: Խորհրդանշական է, որ այսօր մեզանում առաջատար փարաջանովագետ Գարեգին Զաքոյանի՝ կինոգիտության մեջ ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտում կատարած առաջին քայլերը կապված էին հենց Փարաջանովի ֆիլմարվեստի հետազոտության հետ: Իսկ «Սովետական արվեստ» հանդեսի 1970 թ. 2-րդ համարում հրատարակված՝ ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի դիրեկտորի տեղակալ Սաբիր Ռիզաևի «Նռան գույնը» հոդվածը նշանակալի դեր կատարեց ֆիլմի ուսումնասիրության գործում:

Փարաջանովագիտության մեջ ծանրակշիռ ներդրում ունեցավ հայ ականավոր կինոգետ, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՍՍՀ

ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Հեռուստատեսության և կինոյի բաժնի վարիչ, արվեստագիտության թեկնածու Կարեն Լևոնի Քալանթարը (1928-2000): Փարաջանովագիտության մեջ Փարաջանովի և Քալանթարի անուններն ասես միահյուսվել են, քանի որ 1998-ին ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակված նրա «Очерки о Параджанове» մենագրությունը, որը կինոգետ Սուրեն Հասմիկյանն անվանեց «Жемчужина киноведения», փարաջանովագիտության հիմնասյունն է, կարևոր հանգրվան միջազգային փարաջանովագիտության ասպարեզում, յուրաքանչյուր կինոգետի ու փարաջանովյան արվեստի սիրահարի սեղանի գիրքը: Մենագրությունը հրատարակվել է 3 անգամ՝ երկու անգամ ռուսերեն՝ Երևանում (1998) և Սանկտ Պետերբուրգում (2023) և մեկ անգամ հայերեն՝ Երևանում (2012):

Այսօր էր ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում շարունակվում են փարաջանովագիտական հետազոտությունները, որոնք իրականացնում են արվեստագիտության թեկնածուներ Արսեն Համբարձումովն ու Վերոնիկա Ժուռավլյովան:

Բանալի բառեր՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, փարաջանովագիտություն, Հայաստանում փարաջանովագիտության կենտրոն, Սաբիր Ռիզաև, Կարեն Քալանթար, «Очерки о Параджанове», Գարեգին Զաքոյան, «Սերգեյ Փարաջանով – 100» միջազգային գիտական կոնֆերանս:

Ներածություն

Ծանրակշիռ է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի դերն ու նշանակությունը Հայաստանում փարաջանովագիտության ձևավորման ու զարգացման գործում: Ականավոր կինոռեժիսորի ստեղծագործության ուսումնասիրությունը մշտապես գտնվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կինոգետների գիտական հետաքրքրությունների կենտրոնում: Բավական է նշել «Սովետական արվեստ» հանդեսի 1970 թվականի 2-րդ համարում հրատարակված՝ ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, արվեստագիտության դոկտոր Սաբիր Ռիզաևի «Նռան գույնը» հոդվածը[1], որը նշանակալի դեր կատարեց ֆիլմի ուսումնասիրության գործում:

[1] Ռիզաև 1970, 11-19:

Խորհրդանշական է, որ այսօր Հայաստանում առաջատար կինոգետ-փարաջանովագետ Գարեգին Զաքոյանի՝ կինոգիտության մեջ ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտում կատարած առաջին քայլերը կապված էին հենց Փարաջանովի ֆիլմարվեստի ուսումնասիրության հետ:

Ավելին՝ Հայաստանում փարաջանովագիտության ձևավորման ու զարգացման ակունքներում կանգնած ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտը նախաձեռնել է Երևանում Սերգեյ Փարաջանովի թանգարանի հիմնադրման գործն ու ակտիվորեն մասնակցել այդ ուղղությամբ տարվող աշխատանքներին:

Տասնամյակներ շարունակ՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը եղել է ու է Հայաստանում փարաջանովագիտության կենտրոնը: Դրա լավագույն վկայություններից մեկն էլ 2024 թվականի սեպտեմբերի 10-12-ը Երևանում կազմակերպված «Սերգեյ Փարաջանով – 100» աննախադեպ միջազգային գիտական կոնֆերանսն էր:

Փարաջանովագիտության մեջ ծանրակշիռ ներդրում ունեցավ հայ ականավոր կինոգետ, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Հեռուստատեսության և կինոյի բաժնի վարիչ, արվեստագիտության թեկնածու Կարեն Լևոնի Քալանթարը (1928-2000): Ճանաչված կինոգետի կարապի երգը դարձավ «Очерки о Параджанове» հիմնարար աշխատությունը (1998), որը կարևոր հանգրվան դարձավ հայկական կինոգիտության ասպարեզում:

«Կինոգիտության մարգարիտը»՝[2] Կարեն Քալանթարի «Очерки о Параджанове» մենագրությունը

1998-ին ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվեց Կարեն Քալանթարի «Очерки о Параджанове» մենագրությունը[3], որի գրախոսներն էին ՀՀ ԳԱԱ Արվես-

[2] Այսպես բնութագրեց Կ. Քալանթարի «Очерки о Параджанове» մենագրությունը կինոգետ Սուրեն Հասմիկյանը: Տե՛ս Арабян 1998.

[3] Калантар 1998.

տի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լևոն Հախվերդյանն ու ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Արամ Գրիգորյանը: Այս աշխատությունը հեղինակի փարաջանովագիտական երկարամյա ուսումնասիրությունների արդյունքն էր, որը, փաստորեն, դրեց հայկական ակադեմիական փարաջանովագիտության ամուր հիմքերը:

Մենագրությունն առաջ բերեց ինչպես գիտական աշխարհի, այնպես էլ կինոաշխարհի ներկայացուցիչների հիացական արձագանքները: Այսպես՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Լևոն Հախվերդյանի գնահատմամբ՝ «Талантливая книга Карена Калантара о Параджанове – достойный искусствоведческий памятник наследию одного из самых замечательных представителей армянской культуры. Карену Калантару вообще свойственно умение даже о самых сложных искусствоведческих вопросах писать просто и увлекательно. Это умение в полной мере проявилось и в этой книге. Строгая научность киноведческого анализа сочетается здесь с легкой и доступной формой литературного изложения»[4].

Իսկ ակադեմիկոս Արամ Գրիգորյանը նկատեց. «это изумительно целостная книга об изумительно целостном кинематографе Параджанова. Она обладает высокой научной ценностью, современна по самому способу рассуждения, но вместе с тем и глубоко человечна... Блестящая книга Карен Калантара – не только диалог с параджановским кинематографом, но и прекрасный памятник его Творцу»[5]. Միևնույն ժամանակ, Արամ Գրիգորյանի կարծիքով. «Книга "Очерки о Параджанове" – плод многолетнего кропотливого изучения жизни и творчества этого всемирно прославленного кинорежиссера, внесшего выдающийся вклад в национальные кинематографии трех братских народов – армянского, украинского, грузинского и вообще в мировое киноискусство»[6].

---

[4] Григорян 1998, 6.
[5] Григорян 1998, 7.
[6] Григорян 1998, 5.

«Очерки о Параджанове» աշխատության պատասխանատու խմբագիր, արվեստագիտության թեկնածու, կինոգետ Սուրեն Հասմիկյանի դիպուկ գնահատմամբ՝ «Книга Карена Калантара, скромно озаглавленная “Очерки о Параджанове”, – одна из редчайших удач на пути “соперничества-содружества” критика и художника»[7], իսկ «являющиеся стержнем книги К. Калантара аналитические разборы вершинных достижений Параджанова – фильмов “Тени забытых предков” и “Цвет граната” – это подлинные жемчужины киноведения»[8].

Հետաքրքիր է նաև Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության նախագահ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Սերգեյ Իսրայելյանի կարծիքը. «по своему уровню анализ К. Калантаром фильма “Тени забытых предков” равноценен самому этому замечательному фильму»[9].

Գրքի ակնարկներում, կենսագրական տվյալներից զատ (Ակնարկ առաջին՝ «Կենսագրության դրվագներ՝ շեղումներով», Ակնարկ երկրորդ՝ «Ուսուցիչը և սանը», Ակնարկ երրորդ՝ «Գոյատևում» և Ակնարկ վեցերորդ՝ «Քննադատության հարձակումները»), կինոգետը հանգամանորեն կանգ է առնում ու բազմակողմանի խոր վերլուծության ենթարկում Փարաջանովի ավարտուն և անավարտ լավագույն ֆիլմերը՝ «Մոռացված նախնիների ստվերները» (Ակնարկ չորրորդ), «Կիևյան որմնանկարները» (Ակնարկ հինգերորդ), «Փարաջանովի ֆիլմերից ամենափարաջանովյանը. «Նռան գույնը» («Սայաթ-Նովա»)» (Ակնարկ յոթերորդ), «Սուրամի ամրոցի մասին լեգենդը» (Ակնարկ ութերորդ), «Աշուղ Ղարիբ» (Ակնարկ իններորդ) և «Չիրականացված մտահղացումները: Ռեքվիեմ» (Ակնարկ տասներորդ):

Հեղինակը պատմում է Փարաջանովի ռեժիսորական վարպետության ձևավորման մասին, ներկայացնում է նրա ներդրումը համաշխարհային կինոարվեստում, քննության առնում նրա ոչ կինե-

[7] Асмикян 2003, 12.
[8] Григорян 1998, 6.
[9] Григорян 1998, 6.

մատոգրաֆիական ստեղծագործությունը, որի նմուշները պահվում են Երևանում գտնվող Սերգեյ Փարաջանովի թանգարանում:

Լրագրող-արվեստաբան Կարեն Միքայելյանի կարծիքով՝ «Քալանթարը գիտե, թե ինչ է կինոն, և գիտե առավել քան լավ, այնպես որ գիրքը գրված է ոչ թե գրասենյակային տեսաբանի, այլ իսկական պրոֆեսիոնալի կողմից, ով ունակ է մանրակրկտորեն զատել ցորենը որոմից»[10]:

Իր ուսումնասիրությունը Քալանթարն ավարտում է Փարաջանովի և Պագանինիի համեմատությամբ: «У Параджанова было много общего с Паганини. Сколько бы мы не восхищались его режиссерским гением, сколько бы ни говорили, что в кончиках его пальцев был заложен несравненный талант, – главным и решающим в нем была его пылкая, трепетная, полная восторга и веры натура. Слова Паганини: “Нужно сильно чувствовать, чтобы заставить чувствовать других”, могли быть его словами. Он будто нарочита преумножал свои жизненные невзгоды. Как Паганини, он прошел свой путь, словно следуя грустной сентенции Эсхила: Знание через страдание»[11].

Կինոգիտական այս ուսումնասիրության աներկբա հաջողության գրավականն այն էր, որ Վարպետ կինոռեժիսորի արվեստը քննության էր առել Վարպետ կինոգետը, ով ոչ միայն տաղանդավոր գիտնական էր, այլև հայաստանյան կինոպրոցեսի ակտիվ մասնակից:

Փարաջանովագիտության մեջ Քալանթարի հիմնարար աշխատությունը դարձավ նրա կարապի երգը: Երկու տարի անց՝ 2000 թ. հունվարի 1-ին, Կարեն Քալանթարն անժամանակ հեռացավ կյանքից: Արձագանքելով իր տաղանդավոր գործընկերոջ մահվան գույժին՝ Լևոն Հախվերդյանն իրավացիորեն նկատեց. «Տոհմական ազնվականներ շատ են եղել: Հիմա կան, թե չկան՝ չգիտեմ: Եղել են նաև տոհմական մտավորականներ... Հիմա էլ կան, բայց մեզանում նրանց թիվը սպառնալիորեն փոքրանում է: Նրանցից էր արվես-

[10] Микаэлян 1998.

[11] Калантар 1998, 178.

տաբան Կարեն Քալանթարը»[12]:

Արդեն հետմահու հրատարակվեցին Կ. Քալանթարի «Верный божеству искусства (О Генрихе Маляне)» աշխատությունը (2000)[13], որը նվիրվեց ռեժիսորի ծննդյան 75-ամյակին[14], «Обаяние национального кино. Очерки о творчестве Армана Манаряна» մենագրությունը (2007)՝ Արմեն Մանարյանի ստեղծագործությանը նվիրված ուսումնասիրությունը[15], ինչպես նաև «Очерки истории армянского кино»[16] մնայուն, հիմնարար, վաղուց սպասված ուսումնասիրությունը: Այն մեծագույն խնամքով ու անմնացորդ նվիրումով հրատարակման պատրաստեց երաժշտագետ, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Մարգարիտա Ռուխկյանը՝ Կարեն Քալանթարի կինը, նրա հավատարիմ ընկերն ու կյանքի ուղեկիցը, որին էլ նա սիրով ձոնել է հայկական կինոյի պատմությունը ներկայացնող իր վերոհիշյալ վերջին գիրքը:

Քալանթարի մահից հետո ևս «շարունակվեց» նրա փարաջանովագիտական գործունեությունը: 2012-ին ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը, կրկին Մարգարիտա Ռուխկյանի նախաձեռնությամբ ու ջանքերով, պետական պատվերի շրջանակներում լույս ընծայեց Քալանթարի «Очерки о Параджанове» մենագրության հայերեն թարգմանությունը[17]: Շարունակելով արդեն իսկ ձևավորված ավանդույթը՝ Մարգարիտա Ռուխկյանը խնդրեց, որպեսզի գրքի հայերեն տարբերակի համար ներածական խոսք գրի ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը: Ահա Կարեն Քալանթարի կրստեր

---

[12] Հախվերդյան 2003, 14:

[13] Калантар 2000.

[14] Գրքի մասին տե՛ս Мелоян 2000.

[15] Калантар К. Обаяние национального кино. Очерки о творчестве Армана Манаряна 2007.

[16] Калантар К. Очерки истории армянского кино, в 2-х томах, том 1, Ереван, 2004, том 2, 2007.

[17] Քալանթար 2012:

գործընկերոջ խոսքի մուտքը. «Սրանից տարիներ առաջ՝ 1998-ին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունն ընթերցողներին մատուցեց անվանի լրագրող ու հեղինակավոր կինոգետ, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատակից, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու Կարեն Քալանթարի «Очерки о Параджанове» գիրքը, որը ջերմ ընդունելություն գտավ թե՛ մասնագետների և թե՛ արվեստասերների լայն շրջաններում, իսկ գրքին նվիրված գրախոսականներից մեկում կինոգետ Սուրեն Հասմիկյանն այն բնութագրեց որպես «կինոգիտության իսկական գոհար»: Ես ինքս հետաքրքրությամբ կարդացի և հետագայում վերընթերցեցի Կարեն Քալանթարի այս փայլուն՝ տաղանդավոր գրչով և պրոֆեսիոնալ բարձր մակարդակով շարադրված գիտական խոհագրությունն ու թեպետ այդպես էլ չդարձա Սերգեյ Փարաջանովի ստեղծագործության մոլի երկրպագուն (հայկական կինոարվեստում ինձ առավել մոտ և հարազատ են Արտավազդ Փելեշյանի նկարահանած ֆիլմերի կերպարային բովանդակությունը, գեղագիտական ընկալումները, գեղարվեստական լեզուն ու ոճը), այնուամենայնիվ, հիացած էի աշխատության հեղինակի վերլուծական ճկուն մտքով, զուսպ, նույնիսկ ժլատ, բայց պատկերավոր կենդանի լեզվով, սովորական բառերի և մասնագիտական տերմինների ընտրության և գործածության մեջ դրսևորած գրական բացառիկ ճաշակով: Եվ երբ առիթ ունեցա շնորհավորելու ու իմ հիացմունքը հայտնելու Կարեն Լևոնովիչին, նա իմ խոսքերն ընդունեց իրեն բնորոշ մեղմ, բարեհամբույր, փոքր-ինչ շփոթված ժպիտով»[18]:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանի դիպուկ գնահատմամբ՝ «Փարաջանովի կինոարվեստում, նրա ֆիլմերի յուրաքանչյուր կադրում, դրվագում, տարածական իրավիճակի ու կառուցվածքի, մետաֆորիկ նկարչագեղ հյուսվածքի, բազմագունության և բազմաձայնության մեջ գրքի հեղինակը նկատում-տեսնում ու ընթերցողներին համբերատար բացատրում է, թե ինչպես է հռչակավոր ռեժիսորը տեսլարանային դիտարժան, տոնական հանդի-

[18] Աղասյան 2012, 257:

սավոր և, միաժամանակ, իմաստալից գեղեցկություն հաղորդել այն ամենին, ինչին դիպչել է նրա գեղասեր խորամուխ աչքը»[19]:

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի փարաջանովագիտական հետազոտությունները 21-րդ դարում

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդի 2011 թ. հուլիսի 7-ի նիստում պաշտպանվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ասպիրանտ (արտադրությունից չկտրված), ներկայումս՝ ավագ գիտաշխատող Արսեն Համբարձումովի «Սերգեյ Փարաջանովի ատեղծագործության սոցիալ-հոգեբանական և գեղարվեստական նախադրյալները» (ԺԷ.00.01 – «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն») թեմայով թեկնածուական ատենախոսությունը (գիտական ղեկավար՝ Սուրեն Հասմիկյան) և նրան շնորհվել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Համբարձումովն իր հետազոտության արդյունքում եզրակացնում է, որ «Խոստովանությունը» և «Դևը» սցենարների կոմպոզիցիոն կառուցվածքում առանձնացվում են հիմնական նշանակություն ձեռք բերող անգիտակցականի խորհրդանիշները, նախաձևերը (արքետիպերը)[20]:

Տարիներ անց՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման Արվեստագիտության 016 մասնագիտական

---

[19] Աղասյան 2012, 257:

[20] Հետազոտողի կարծիքով՝ սցենարներում տեսարանները և դրվագները իրար հետ փոխգործակցում են ըստ կոլաժային սկզբունքի: Նախաձևի (արքետիպի) խորհրդանիշը Փարաջանովի ֆիլմերում հենման կետերից է: Կադրի կամ տեսարանի պայմանականության մեջ խորհրդանիշի շեշտադրությունը դրանք դարձնում է սուբստանցիաներ, իրենց նշանակությամբ ինքնուրույն բաղադրիչներ: Իսկ այդ սկզբունքով նկարահանված ֆիլմը կառուցվում է իրավիճակների համադրություններից: Համբարձումովի համոզմամբ՝ Փարաջանովի շուրջ առասպելը ձևավորվել է իր կյանքի ընթացքում և կապ է ունեցել ինչպես իր ստեղծագործությունների, այնպես էլ իր իսկ՝ հեղինակի անձի անզուգականության և ճակատագրի հետ, ինչը ժամանակին հանգեցրեց մոդայի ու հեղինակության հետ կապված Փարաջանովի նկատմամբ որոշակի մոդելի ստեղծմանը:

խորհրդի 2023 թ. մարտի 16-ի նիստում պաշտպանվեց ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հայցորդ Վերոնիկա Ժուռավլյովայի «Աշխարհի պատկերի էական ասպեկտները Սերգեյ Փարաջանովի ստեղծագործության մեջ» (ԺԷ.00.01 – «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն», գիտական ղեկավար՝ Գարեգին Զաքոյան) ատենախոսությունը և նրան շնորհվեց արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Ատենախոսը բացահայտել է իրար փոխլրացնող և փոխներթափանցող չորս կատեգորիաներ, որոնց վրա հենվում է ռեժիսորի ստեղծագործության մեջ աշխարհի պատկերը: Դրանք են՝ ոչ ազգային արքետիպային սյուժեները, Փարաջանովի՝ սեփական կենսագրության առասպելականացման վրա կառուցված կենսարարումը, նորի ստեղծման համար որպես նյութ արդեն գոյություն ունեցող ստեղծագործությունների օգտագործումը՝ պոստմոդեռնիստական բաղադրիչ[21]:

2015 թ. հրատարակվեց Արսեն Համբարձումովի «Социально-психологические и художественные предпосылки творчества С. Параджанова» մենագրությունը[22], որտեղ հեղինակը քննության է առել Փարաջանովի ֆիլմերը, սցենարներն ու որոշ կոլաժներ: Համբարձումովն առանձնացնում է վարպետի ստեղծագործության մեջ արքետիպերի ու սիմվոլների նշանակությունը և այն, թե ինչպես են դրանք ազդում փարաջանովյան ստեղծագործությունների բովանդակության վրա: Աշխատության մեջ հատուկ ուշադրություն է դարձվում Փարաջանովի շուրջ ստեղծված առասպելի թեմային:

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը և Փարաջանովի 100-ամյա հոբելյանը

Ս. Փարաջանովի ծննդյան 100-ամյա հոբելյանին ընդառաջ՝ 2023 թ. Սանկտ Պետերբուրգում, վերահրատարակվեց Քալանթարի

[21] Ժուռավլյովան բացահայտել է, որ իրար հետ սերտորեն փոխկապակցված այդ կատեգորիաներն ստեղծում են միասնական կառույց, որն արտացոլվում է Փարաջանովի գործունեության մեջ: Այնուհետև հեղինակը վերլուծել է Փարաջանովի ստեղծագործության մեջ աշխարհի պատկերի կայացման պրոցեսը:

[22] Амбарцумов 2015.

«Очерки о Параджанове» մենագրությունը, այս անգամ՝ արվեստագիտության թեկնածու Վերոնիկա Ժուռավլյովայի ջանքերով[23]:

Օլշտինում Վարմիա և Մազուրի համալսարանի սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, սոցիոլոգիայի դոկտոր, պրոֆեսոր Մարեկ Սոկոլովսկու նախաձեռնությամբ և խմբագրությամբ, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հետ համագործակցությամբ, 2024 թ. օգոստոսին Պոզնանում (Լեհաստան) հրատարակվեց «Tribute to Sergei Parajanov. On the centenary of artist's birth»[24] գիտական հոդվածների ժողովածուն, որտեղ անգլերեն և լեհերեն լեզուներով տպագրվեց աշխարհի տարբեր երկրներից, այդ թվում՝ Հայաստանից, Լեհաստանից և ԱՄՆ-ից հետազոտող գիտնականների փարաջանովագիտական 16 հոդված: ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտից ժողովածուում տեղ գտան Արարատ Աղասյանի և տողերիս հեղինակի[25], Արսեն Համբարձումովի[26] ուսումնասիրությունների արդյունքները:

Իսկ 2024 թ. սեպտեմբերի 10-12-ը ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների անցկացման համար ստեղծված Կառավարական հոբելյանական հանձնաժողովի որոշմամբ՝ ՀՀ ԿԳՄՄՆ աջակցությամբ կազմակերպեց «Սերգեյ Փարաջանով - 100» միջազգային աննախադեպ գիտական կոնֆերանսը:

Եզրակացություն

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում փարաջանովագիտական հետազոտություններն իրականացվել են հետևյալ ուղղություններով՝

1. գիտական աշխատություններ՝ մենագրություններ, այդ թվում՝ Կարեն Քալանթարի «Очерки о Параджанове» մենագրությունը հրատարակվել է 3 անգամ (ռուսերեն՝ 1998-ին Երևանում և 2023-ին՝ Սանկտ Պետերբուրգում, հայերեն՝ 2012-ին՝ Երևանում),

[23] Калантар 2023.
[24] Tribute to Sergei Parajanov. On the centenary of artist's birth 2024.
[25] Aghasyan, Asatryan 2024, 293-303.
[26] Hambardzumov 2024, 169-174.

2. գիտական հոդվածների ժողովածուներ, այդ թվում՝ «Tribute to Sergei Parajanov. On the centenary of artist's birth» (խմբագիր՝ պրոֆեսոր Մարեկ Սոկոլովսկի), Պոզնան (Լեհաստան), 2024,

3. գիտական հոդվածներ և զեկուցումներ,

4. ատենախոսություններ (Արսեն Համբարձումով՝ «Սերգեյ Փարաջանովի ատեղծագործության սոցիալ-հոգեբանական և գեղարվեստական նախադրյալները», Վերոնիկա Ժուռավլյովա՝ «Աշխարհի պատկերի էական ասպեկտները Սերգեյ Փարաջանովի ստեղծագործության մեջ»),

5. միջազգային գիտական կոնֆերանսի կազմակերպում՝ 2024 թ. սեպտեմբերի 10-12-ը Երևանում ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների անցկացման համար ստեղծված Կառավարական հոբելյանական հանձնաժողովի որոշմամբ՝ ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ կազմակերպեց «Սերգեյ Փարաջանով - 100» միջազգային գիտական կոնֆերանսը:

Գրականություն

1. Աղասյան Ա. Կարեն Քալանթար. տոհմիկ մտավորականն ու վաստակաշատ կինոգետը, Կարեն Քալանթար, Ակնարկներ Փարաջանովի մասին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, էջ 257-261:
2. Հախվերդյան Լ. Նա ինտելիգենտ էր ի բնե..., Կարեն Քալանթար: Հոդվածների և հուշերի ժողովածու Կարեն Քալանթարի մասին, Երևան, «Նաիրի», 2003, էջ 14-15:
3. Ռիզան Ս. «Նռան գույնը», «Սովետական արվեստ», 1970, № 2, էջ 11-19:
4. Քալանթար Կ. Ակնարկներ Փարաջանովի մասին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, 262 էջ+8 էջ նկ.:
5. Амбарцумов А. Социально-психологические и художественные предпосылки творчества С. Параджанова (редактор – С. Маргарян), Ереван, «Антарес», 2015, 200 с. + 8 с. цв. вкл.
6. Асмикян С. Рыцарь слова, Կարեն Քալանթար: Հոդվածների և հուշերի ժողովածու Կարեն Քալանթարի մասին, Երևան, «Նաիրի», 2003, с. 11-13.
7. Арабян Т. «Правда Армении», № 4, 1998.
8. Григорян А. Об авторе и его книге, Калантар Карен, Очерки о Параджанове (Ответ. ред. С.Г. Асмикян), Ереван, Издательство «Гитутюн» НАН РА, 1998, с. 5-7.

9. Калантар К. Верный божеству искусства (О Генрихе Маляне), Ереван, «Мива-пресс», 2000, 84 с. с илл.
10. Калантар К. Очерки истории армянского кино, в 2-х томах, том 1 (Сост. М. Рухкян), Ереван, «Наири», 2004, 216 с., 8 л. илл.
11. Калантар К. Очерки истории армянского кино, в 2-х томах, том 2 (Сост. М. Рухкян), Ереван, «Наири», 2007, 456 с., 12 л. илл.
12. Калантар К. Обаяние национального кино. Очерки о творчестве Армана Манаряна, Ереван, Издательство Музея литературы и искусства, 2007, 204 с. с илл.
13. Калантар К. Очерки о Параджанове (Ответ. ред. С.Г. Асмикян), Ереван, Издательство «Гитутюн» НАН РА, 1998, 182 с., 6 л. илл.
14. Калантар К. Очерки о Параджанове, Санкт-Петербург, "Jaromir Hladik press", 2023, 304 с.
15. Мелоян С. Верные божеству искусства, «Новое время», 3 октября, 2000.
16. Микаэлян К. «Очерки» о Параджанове, «Новое время», 11 апреля, 1998.
17. Aghasyan A. , Asatryan A. , Karen Kalantar's contribution to parajanov studies, Tribute to Sergei Parajanov. On the centenary of artist's birth, Ed. Marek Sokołowski, Poznan, 2024, p. 293-303.
18. Hambardzumov A. Film props, objects and things as symbols in selected films of Sergei Parajanov, Tribute to Sergei Parajanov. On the centenary of artist's birth, Ed. Marek Sokołowski, Poznan, 2024, p. 169-174.
19. Tribute to Sergei Parajanov. On the centenary of artist's birth, Ed. Marek Sokołowski, Poznan, 2024.

АСАТРЯН Анна Григорьевна
доктор искусствоведения, профессор,
заслуженный деятель искусства Армении, директор Института искусств НАН РА, заведующая отделом музыки (Армения, Ереван)
annaasatryan2013@gmail.com

ВКЛАД ИНСТИТУТА ИСКУССТВ НАН РА В ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ ПАРАДЖАНОВЕДЕНИЯ В АРМЕНИИ

Творчество Сергея Параджанова неизменно входило в круг исследовательских интересов киноведов Института искусств НАН РА. Стоявший у истоков формирования и развития параджановедения

в Армении Институт искусств инициировал создание в Ереване Музея Сергея Параджанова и проявлял активное участие в проводимой в этом направлении работе.

Институт искусств НАН РА десятилетиями был и остается центром параджановедения в Армении. Одним из лучших свидетельств тому является не имеющая прецедента международная научная конференция «Сергей Параджанов – 100», состоявшаяся в Ереване 10-12 сентября 2024 года. Символично, что первые шаги в киноведении, сделанные в Институте искусств НАН РА сегодня уже известным армянским киноведом-параджановедом Гарегином Закояном, были связаны именно с изучением киноискусства Параджанова. Опубликованная в 1970-м году (№ 2) в журнале «Советакан арвест [Советское искусство]» статья заместителя директора Института искусств АН Арм. ССР Сабира Ризаева, озаглавленная «Цвет граната» (на армяснком языке), сыграла значительную роль в дальнейших исследованиях этого фильма.

Весомый вклад в параджановедение внес известный армянский киновед, Заслуженный деятель искусств Арм. ССР, заведующий Отделом телевидения и кино Института искусств АН Арм. ССР, кандидат искусствоведения Карен Левонович Калантар (1928-2000). Имена Параджанова и Калантара словно сплелись воедино в параджановедении, что отнюдь не случайно, ибо изданная в 1998 году по решению ученого совета Института искусств НАН РА его монография «Очерки о Параджанове», названная киноведом Суреном Асмикяном «жемчужиной киноведения», является краеугольным камнем исследований творчества Параджанова, ценным источником в области международного параджановедения, настольной книгой каждого киноведа и поклонника искусства Параджанова. Монография издавалась три раза: дважды на русском языке – в Ереване (1998) и Санкт-Петербурге (2023), и один раз – на армянском, в Ереване (2012).

В Институте искусств НАН РА и сегодня творчество Параджанова находится в центре исследовательского внимания, в частнос-

ти, кандидатов искусствоведения Арсена Амбарцумова и Вероники Журавлевой.

Ключевые слова: Институт искусств НАН РА, параджановедение, центр параджановедения в Армении, Сабир Ризаев, Карен Калантар, «Очерки о Параджанове», Гарегин Закоян, Международная научная конференция «Сергей Параджанов – 100».

Anna ASATRYAN
Doctor of Sciences (Arts), professor,
RA Honored Worker of Arts, Director of NAS RA Institute of Arts,
Head of the Music Department (Armenia, Yerevan)
annaasatryan2013@gmail.com

CONTRIBUTION OF NAS RA INSTITUTE OF ARTS TO THE FORMATION AND PROGRESS OF PARAJANOV STUDIES IN ARMENIA

Sergey Parajanov's oeuvre has constantly been part of the scope of research interests of NAS RA Institute of Arts film critics. The Institute stood at the origins of formation and development of Parajanov studies in Armenia. Thus, the Parajanov Museum in Yerevan had been founded through the initiative and active participation of the Institute of Arts in the work conducted in that direction.

For decades, NAS RA Institute of Arts has been and remains the center of Parajanov studies in Armenia. The unprecedented international scientific conference "Sergey Parajanov – 100", which took place in Yerevan on September 10-12, 2024, best attests to it. Symbolically, the first steps in the field of film studies, taken at NAS RA Institute of Arts by the presently renowned Armenian film critic and Parajanov expert Garegin Zakoyan, were related to the study of Parajanov's film art. In No. 2, 1970 of the magazine "Sovetakan arvest [Soviet Art]", the article "The Color of Pomegranates" by Sabir Rizayev, Deputy Director of the Institute of Arts of NAS of Arm. SSR, was published. It played a crucial part in the further studies of the said film.

A valuable contribution to Parajanov studies was made by the eminent film critic, Honored Worker of Arts of Arm. SSR, Head of the Department of Television and Cinema, Doctor of Arts Karen Kalantar (1928-2000). Parajanov's and Kalantar's names seem to be entwined in Parajanov studies, which is by far not surprising, since the monograph "Essays about Parajanov", issued in 1998 by the decision of the Academic Council of NAS RA Institute of Arts, dubbed by the film critic Suren Hasmikyan "a pearl in film studies", is a cornerstone of studying Parajanov's oeuvre, a valuable source in the field of international Parajanov studies, a desk book foe every film critic and any admirer of Parajanov's art. The m monograph came out three times: twice in Russian – in Yerevan (1998) and Saint-Petersburg (2023), and once – in Armenian in Yerevan (2012).

At NAS RA Institute of Arts, Parajanov's oeuvre remains in the focus of research interests, in particular, of the film critics Arsen Hambardzumov and Veronika Zhuravleva – both PhD in Arts.

Key words: NAS RA Institute of Arts, Parajanov studies, center of Parajanov studies in Armenia, Sabir Rizayev, Karen Kalantar, "Essays about Parajanov", Garegin Zakoyan, International scientific conference "Sergey Parajanov – 100".